



EECALink

Եվրամիության և Արևելյան Եվրոպայի ու Միջին Ասիայի երկրների միջև միջազգային համագործակցության խթանման և դյուրինացման նախագիծ

EECALink նախագիծի նպատակն է նախանշել Եվրամիության և Արևելյան Եվրոպայի ու Միջին Ասիայի /ԱԵՄԱ/ երկրների ընդհանուր գիտական առաջնայնությունները և խթանել համագործակցությունը այդ երկրների միջև: EECALink-ը ֆինանսավորվում է 7-րդ Շրջանակային ծրագրի Առողջապահություն թեմատիկ ուղղության շրջանակներում /պայմանագիր N°223359/: Նախագծի համկարգողն է Պրագայի Չարլզ համալսարանի բժիկագիտության ֆակուլտետի պրոֆ. Ստանիսլավ Ստիպեկը: Ընդհանուր առմամբ նախագծում ընդգրկված են 17 գործընկերներ 12 երկրներից, որոնք են՝ Հայաստանը, Բելառուսը, Չեխիայի Հանրապետությունը, Վրաստանը, Հունգարիան, Իտալիան, Ղազախստանը, Մոլդովան, Լեհաստանը, Ռուսաստանը, Ուկրաինան և Ուզբեկիստանը:

Նախագիծն ուղղված է շահառուների երեք խմբերին. 1/ քաղաքականություն իրականացողներ, 2/ համալսարանական և ակադեմիական գործընկերներ, 3/ լայն գիտական հանրություն: Նախագծի շրջանակներում առաջին հանդիպումը կայացավ 2009թ. հունիսին և այն կիրառործվի մինչև 2011թ. նոյեմբերը /տևողությունը՝ 30 ամիս /:

Նախագծի առաջնայնությունները.

1. Խրախուսել և զարգացնել միջազգային համագործակցությունը բժշկագիտական հետազոտությունների ոլորտում՝ 7ԾԾ –ի մրցույթներին մասնակցելու համար նոր կոնսորցիումների ստեղծման ուղղությամբ հետևողական աջակցություն ցուցաբերելու միջոցով:
2. Նպաստել գիտական կոնսորցիումների հետագա ձևավորմանը և աջակցություն ցուցաբերել 7ԾԾ-ի նախագծերի առաջարկների նախապատրաստման հարցում:
3. Նախանշել ԱԵՄԱ և ԵՄ երկրների համատեղ գիտահետազոտական հետաքրքրությունները և ապահովել դրանց արդյունավետ ներկայացումը համապատասխան քաղաքականություն իրականացողներին:
4. Ամրապնդել և ընդարձակել մասնակից համալսարանների և ակադեմիական գործընկերների միջև գոյություն ունեցող համագործակցությունը:
5. Ստեղծել և զարգացնել համալսարանական և ակադեմիական կարողություններ 7ԾԾում առավել արդյունավետ մասնակցության համար:
6. Նպաստել 7ԾԾի մասին տեղեկատվության ավելի լայն տարածմանը նախագծում չընդգրկված գիտական առավել լայն լսարանին՝ փոքր և միջին ձեռնարկություններին, համալսարաններին և այլ գիտահետազոտական ինստիտուտներին :

Նախագծի ակնկալվող հիմնական արդյունքները.

1. Խթանել ԱԵՄԱ երկրների գիտնականների մասնակցությունը 7ԾԾ-ում՝ աջակցություն ցուցաբերելով նրանց մասնակցելու 7ԾԾ-ի այլ նախագծերի շրջանակներում կազմակերպվելիք երեք brokerage event-ների /գործընկերների փնտրմանն ուղղված միջոցառումներ/:

- Առաջարկվում են ճանապարհորդային դրամաշնորհներ /դիմումների ստացման առաջնահերթության հիմունքով, մանրամասների համար տե՛ս դրամաշնորհների ստացման կարգի մասին տեղեկատվական փաթեթը/ Հայաստանի, Բելառուսի, Վրաստանի, Ղազախստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Ուկրաինայի և Ուզբեկստանի գիտնականներին՝ “Առողջապահություն” թեմատիկ ուղղությանը նվիրված գործընկերների փնտրման միջոցառումներին մասնակցելու նպատակով:
- Նախագծի կոնսորցիումի անդամներն իրենց օգնությամբ ստեղծված նոր գիտական կոնսորցիումներին առաջարկում են աջակցություն՝ նախագծերի ներկայացման հարցում. աջակցությունը ցուցաբերվում է նախագծին մասնակցող 7ՇԾ-ի փորձագետների օգնությամբ /ԳՐԱՆՏ Գարանտ ՍՊԸ /Չեխիա/, Եվրոպական գիտության զարգացման գործակալություն /Իտալիա/, Հունգարիայի Գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ, Կրակովի տեխնոլոգիայի համալսարան /Լեհաստան/:
- ճանապարհորդային դրամաշնորհների և նախագծերի ներկայացման աջակցության առնչությամբ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելեք հետևյալ ինտերնետային կայքը՝ http://www.eecalink.eu/?cat=proposal_support :

2. Բրյուսելում EECALink նախագծի մասնակից երկրների գիտաժողովի և կից գործընկերների փնտրման միջոցառման կազմակերպում է՝ 2011թ. համապատասխան մրցույթի հայտարարման ժամկետի հետ համակարգված:

- Ամփոփիչ գիտաժողովը, ինչպես նաև գործընկերների փնտրման միջոցառումը /մոտ 100 մասնակից/ կկազմակերպվի նախագծի ավարտական փուլում /նախատեսված ժամկետը՝ 2011թ. հունիսին /:

3. Կարողությունների զարգացման 12 երկօրյա ազգային միջոցառումների կազմակերպում՝ նախագծի մասնակից բոլոր երկրներում:

- Թեյնինգները նվիրված են մասնակից երկրների առողջապահության ոլորտի գիտական համայնքներում 7ՇԾ-ում արդյունավետ մասնակցության և 7ՇԾ-ի մասին իրազեկության բարձրացմանը: Ի լրումն 7ՇԾ-ի ընդհանուր դրույթների, կառավարման սկզբունքների և ֆինանսական կանոնների մասին զեկույցների, կարծարծվեն նաև յուրաքանչյուր ԱԵՄԱ երկրների համար առանձնահատուկ առողջապահական հետազոտությունների խնդիրներ, որոնք առնչվում են 7ՇԾի թեմատիկ ուղղությունների հետ:

4. Անցկացնել ԱԵՄԱ ազգային քննարկումներ, որոնք նվիրված կլինեն ՇԾ-ի ապագա մրցույթների համար հնարավոր թեմատիկ ուղղությունների առաջադրմանը՝ համաձայն տվյալ երկրի գիտական գերակայությունների:

- ԱԵՄԱ երկրներում կանցկացվեն ութ սեմինար/քննարկումներ՝ որոնց կմասնակցեն հինգ ներկայացուցիչներից բաղկացած ազգային փորձագիտական խմբեր և ԵՀ ներկայացուցիչ՝ բացահայտելու համար բժշկագիտական հետազոտությունների ոլորտում տվյալ երկրի և ԵՄ թեմատիկ առաջնայնությունների բացարկները և համընկնումները:
- Քննարկումները թույլ կտան նախանշել բժշկագիտական

հետազոտությունների ոլորտում գոյություն ունեցող գիտահետազոտական ծրագրերի բացարկները և համընկնումները, նախանշել համատեղ հետաքրքրություն ներկայացնող գիտահետազոտական թեմաներ՝ որոնց ուղղությամբ հնարավոր է համագործակցել հաջորդ՝ Ցրդ ՇԾ-ի շրջանակներում:

Նախագծի մասին առավել մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ նախագծի քարտուղարությունից՝ էլ.փոստի միջոցով: vojtech.nosek@lf1.cuni.cz
պարոն Վոյտեկ Նոսեկ,
Պրագայի Չարլզ համալսարան, Բժշկագիտության ֆակուլտետ
կամ այցելել մեր ինտերնետային կայքը
www.eecalink.eu